

## Գ Ի Տ Ա Կ Ա Ն

## Զ Ո Ջ Ա Ն Յ Տ Ա Ն

## Ս Ա Ս Մ Ա Յ Ժ Ռ Ե Ր

## Դ Ա Ի Ի Թ Ե Ի Մ Հ Է Ր

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԷՊԻ

Պատմականը, Դիցաբանականը եւ Կենցաղականը

Մհէր անունը յիշուում է Մամիկոնեանց մէջ ԺԻ. դարում: «Զորդուանէլ որդի Տաճատայ քաջի Մամիկոնոյ» «իշխան մեծի տէրութեան Տարոնոյ եւ ամենայն Հայոց» մի հրամանագրով ՇԾԳ (=1104) թուականին սուրբ Առաքելոց Ղազարու վանքին պարգևում է մի դաստակերտ իւր որոշ սահմաններով, ինչպէս ասում է «ի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց . . . եւ նախնեաց իմոց քաջ արանցն Վեսենա եւ Մեհերա, որք յառաջ քան զմեզ տիրէին յայսմ աշխարհիս»<sup>1</sup>: Այս Մհէրի մասին այս մի քանի բառից աւելին մեզ յայտնի չէ:

Դիւցազներգութեան Մհէրը կնութեան է առնում Թեաթորոսի աղջիկը, իսկ մենք արդէն ցոյց ենք տուել, որ վէպի Թեաթորոսը պատմութեան Թէոդորոս Ռշտունին է<sup>2</sup>: Մամիկոնեանց եւ Ռշտունեաց խնամութիւն յիշատակում են մեր պատմագիրները Գ. դարուց, Տիրան Բ-ի կոտորածից ազատուում են Մեհենդակ Ռշտունու Տաճատ եւ Վաչէ Արծրունու Շաւասպ որդին Մամիկոնեան Արտաւազդ եւ Վասակ զօրավարների ձեռքով: Վերջին երկուսը առաջին երկուսին տարան իրենց Տայոց աշխարհի

1. Հայապատում Բ. § 294, էջ 396—397. Վենետիկ 1901:

2. Արարատ 1906, դեկտեմբեր էջ 876—879:

ամբողջները. «և սնուցանում էին այն մանուկներին, Շա-  
ւասպին և Տաճատին, և իրենց դուստրները նոցա կնու-  
թեան տունն, ուստի դարձեալ միւս անգամ այն ազգերը  
սերուեցան»<sup>1</sup>. — Եթէ ի նկատի առնենք այն հանգամանքը,  
որ Թէոդորոս Ռշտունու զօրանալով նսեմանում են Ար-  
ծրունիք, որ Թէոդորոսի որդին Վարդ Պատրիկը կոչուում է  
«իշխան Արծրունեաց»<sup>2</sup>, որով այս երկու տոհմերը կարծես  
միևնոյն են դառնում, այն ժամանակ պէտք է ասենք  
Ռշտունի-Արծրունեաց խնամութիւնը Մամիկոնեանց հետ  
շարունակուել է ոչ միայն Ե. այլ և յետագայ դարերում  
մինչև ԺԲ. դարը և այս տոհմերի իսպառ անհետանալը<sup>3</sup>.  
Իսկ է. Դարում կան փոխադարձ ամուսնութեան երկու  
դէպք յիշուած. Ըստ Յովհան Մամիկոնեանի Վարդ Պատ-  
րիկը կին էր առել Մշոյ և Խութայ, Տարօնոյ և Մանոյ  
իշխան Մուշեղի Մարիամ անունով դուստրը: Այս Մու-  
շեղը, ինչպէս ցոյց ենք տուել Ազգային ժողովրդական  
վէպի Մշոյ թագաւոր Մուշեղն է<sup>4</sup>:

Այն բոլորից յետոյ, որ մենք Արարատի 1906  
թուի գեկտեմբերի համարի ծանօթութեանց մէջ ասել  
ենք, եթէ մէկն ուզենայ Յովհան Մամիկոնեանի այս հա-

1. Փ. Բուզ. Գ. Ժք, էջ 47:—նոյն դարում Մանուէլ Մա-  
միկոնեանի ժամանակ յիշուում է «Քարեգին, տէր դաւառին  
Ռշտունեաց» . . . «Այս Քարեգին փեսայ լեալ յառաջ Համա-  
դասպէի, զբոյր նորին Համադասպուհի անուն ունէր կին», իսկ  
այս Համադասպէ՝ Համադասպ կամ Համադասպեանը «էր սեպուհ  
մի ի Մամիկոնեան տոհմէն» (Բուզ. Ե. լէ, էջ 249—250) և եղ-  
բայր Վարդան Մամիկոնեանց Նահապետի և ուրացեալ Վահանի:  
Վերջինս հօրէ մէկ էր, բայց ոչ մօրէ մէկ (Բուզ. Դ. Ժթ, էջ 182—  
184. տես «Եղբարիւ» բառը):

2. Յովհան. Մամիկոն. Պատմ. Տարօնոյ Ա. էջ 9. Վենե-  
տիկ 1889:

3. Ե. դարում Հիւսուածք Գ. հատր. § 8, էջ 94—96:—  
Թ. դարում Թովմ. Արծրունի Գ. Ժգ, էջ 194:—ԺԲ. դարում և  
այլն Հայապատում Բ. § 293, էջ 393 և Թովմ. Արծրունի (շա-  
րունակողը) Գ. Ժբ, էջ 311 և 314:

4. Արարատ 1906, գեկտեմբեր, էջ 871—875:

զորդած տեղեկութիւնը պատմական անցեալի միայն յուշիկ համարել, անհերքելի է սակայն, որ մի Մամիկոնեան Թէոդորոս Ռշտունու փեսան է, որ վէպն էլ ունի ժամանակակից պատմագիրն ասում է. «իսկ Ռշտունեաց տէր Թէոդորոսն ինքը և իւր փեսայ Մամիկոնեանց տէր Համազասպը դարանակալ եղան Աղթամար կղզում»<sup>1</sup>.

Արդեօք Համազասպը մի պատուանուն կամ մակդիր<sup>2</sup> ունէր, որ Մհեր անունը մեզ յիշեցնէր, չգիտենք. թէ Համազասպ անունն Համո ժողովրդի ցարգ սովորական կրճատումը կարող էր Մհո, Մհէ<sup>3</sup> փոխուելով Մհեր-ի հետ ժողովրդի բերանում նոյնանալ, անհաւանական չենք համարում. Ինչ որ էլ լինի պատմական իրողութիւն է, որ Համազասպ Մամիկոնեանը Թէոդորոս Ռշտունու փեսան է, ինչպէս ժողովրդական վէպի Մհերը Թեաթորոսինը:

Ուրիշ հանգամանքներ ևս մեզ տեղիք են տալիս պնդելու մեր ասածի վրայ, թէ Մամիկոնեան Համազասպը վէպի Մհերն է:

Պատմագիրն ասում է, որ Թէոդորոս Ռշտունու մահից յետոյ «Մեր հայոց աշխարհի իշխանութիւնը իւր ձեռքին ունէր Մամիկոնեանց տէր Դաւթի<sup>4</sup> որդի Համա-

1. Սեբէոս Գ. 1, էջ 143:

2. Միշտ էլ եղել է այդ թէ հնումը և թէ այժմ: Լ. դարում «Վարդիկ իշխանն Մուկաց, որ կոչեք Ահնիկ» Սեբէոս Գ. 1, էջ 109:

3. Ղարաբաղցոց բարբառով հիմա(կ) = մհենկ, ուրիշները մհար, մհա:

4. Այս Դաւթ Մամիկոնեանն ունէր և մի ուրիշ որդի Մուշեղ անունով, որ սպանուել է ըստ Սեբէոսի Հերթիճանի (= Կաղիսիճա 636 կամ 637 թուականին, Թ. հէօլդէքէ Պատմ. Սասանեան էջ 87, Վաղարշապատ 1896: Ըստ Սաէնլի Լէն-Պուլի 635 թուականին, I. էջ 4) օրեր անող ճակատամարտում Ռոստոմ պարսիկ զօրավարի հետ: «Իր անդ և Մուշեղ Մամիկոնեան որդի Դաւթի զօրավարն Հայոց երեք հազար սպառազինօք, և Գրիգոր իշխանն Սիւնեաց տէրն Ռ. արամբ . . . մեռաւ և զօրավարն Ռքոտամն. և սպանին և զՄուշեղ երկու քեւորդւովքն, և զԳրիգոր Սիւնեաց աէր միով որդւով»: Սեբէոս Գ. 1, էջ 107:

դասպը, ամեն կողմից առաքինի<sup>1</sup>, այսինքն քաջ Դարձեալ Սերէոսը գիտէ, որ Համազասպի, մի եղբայրը պատանդ էր<sup>2</sup> Դամասկոսում, իսկ Յովհաննէս կաթողիկոս պատմաբանի վկայութեամբ Համազասպի յաջորդն էր իւր եղբայրը Գրիգոր, «Հայոց մեծ հայրապետ ներսէսը (Գ. Շինող) հայոց նախարարների հետ միասին խնդրում է Մաւիա ամիրապետից, որ Հայոց իշխանական պետութեան վերայ կացուցանէ Գրիգոր Մամիկոնեանին, որ ի պատանդ առ նմա կացեալ էր»։ Գրիգոր Մամիկոնեանի հրամանով Անաստաս կաթողիկոսը մկրտում է արքայազն Սուրհան պարսիկին և «ինքը մեծ իշխանը ընդունելով նորան սուրբ ատաղանի ջրից, նորան յորջորջում է Դաւիթ իւր հոր անունով»<sup>3</sup>։

Արդ մենք երկու պատմուածքում տեսանք որ Մհէրը, թէև փոքրը, Դաւթի որդին է. իսկ ըստ №-12 ի Մեծ Մհէրը Ծուռ Դաւթի տղան է. №-4, որ եղած փոփոխակների մէջ ամենահարուստն է իւր հազորդած պատմական անձերով և տեղեկութիւններով, ասում է, թէ Մհէրին «մէկ տղայ եղաւ, տղէն որ մկրտեցին անուն դրին Դաւիթ, սխալեւ անուան վրայ»։ Չնայելով որ այդ փոփոխակի ճիւղագրութեամբ Խանդութ խաթունի այր Դաւիթը Սանասարի թոռն է, բայց այդ նոյն Դաւիթը Մհէրի որդին, իւր պապկայ անունով Դաւիթ է կոչուում Պարզ է ուրեմն վէպը կապելով Մամիկոնեանց և Արծրունիներին միմեանց հետ, անգիտակցաբար պահել է և իսկականը, որով Մհէրի հայրն էլ Դաւիթ էր կոչուում, ինչպէս և Համազասպի հայրը։

Սերէոսը շարունակում է Համազասպի մասին, թէ ընդհանեսուն, ընթերցասէր և ուսումնասէր էր, և իւր

1. Սերէոս Գ, 1, ք, էջ 150:

2. Սերէոս Գ, 1, ք, էջ 152:

3. Յովհաննէս կաթողիկոս էջ 51—52, Մոսկվա 1853: Երուսաղէմի տպագրութիւն 1867. Ի, էջ 114—117:

հայրենի ազգի՝ ցեղի զինուորական հրահանգների մարզմունքներին վարժ ու կիրթ չէր, ճակատ չէր մղել ևւ թըշնամիների դեմքերը չէր տեսել: Եւ արդ սկսաւ նախանձել իւր հայրենի տան քաջութեան բնութեանը՝ յատկութեանը, որ ջերմեռանդ փութով քաջութեան գործ կատարէ լիապէս ըստ իւր նախնիքների վարժութեանց, վերելից՝ Աստուծոց խնդրելով առաջնորդութիւն և յաջողութիւն իւր անձի համար քաջութիւն կատարելու:— Ակամայ յիշում ես Մհէրի պարզամիտ մանկութեան աննպատակ խաղերը, որսորդութիւնը. թէ ինչպէս նա երազ է տեսնում, ջերմեռանդութեամբ մատաղ է տանում քառասուն երինջ, մուրազն առնում և հրեղէն ձին և զէնքերը վիճակուում են նորան Աստուծոց Պատանեկութեան օրերում նա իրօք թշնամու երես չէր տեսել և ճակատ չէր մղել, մինչև որ պառաւից իմանալով իրերի դրութիւնը Աստուծոց վիճակուած իւր ձիով ու զէնքերով քաջութեան հրաշքներ է դործում:

Ըստ վէպի Հայաստանի քաղաքական դրութիւնն այսպէս է: Մարայ կռապաշտ թագաւորը Հայաստանն տերութւմ, գերիներ է վարում, և Կապուտիօղ նստած Պապ թագաւորը իւր թախտի և երկրի ասպհովութեան համար խոստանում է իւր աղջիկը տալ Մարայ թագաւորի տղային, որ սակայն տասներկու տարով յետաձգուում է: Մհէրն իմանալով երկու անգամ պատերազմ է մղում և քաջութեամբ հասնում է Մըսր: Այստեղ ունի աղօրինի մի գաւակ, որին եօթ տարուց յետոյ յանձնում է իւր երեխաներին պահպանելու, ուրեմն վերջն ընկճուում է և հպատակուում:

Մօրիկի և Խօսրովի 591 թուականի դաշնադրութեամբ համարեա ամբողջ Հայաստանը Յոյների ձեռքին էր մինչև 640 թուականը: Այս ժամանակը վէպում Գ. դարու հոռոմոց ազդեցութեան շարունակութիւնն է համարուել, որի գլխաւոր ներկայացուցիչն իրօք Պապն էր: Ըստ Բուզանդի Կապուտիօղ—Կապոյտ բերգն առնելում է Պարսիկ-

ներից և ի միջի այլ բազմաթիւ հայ տիկին դերիներէ հետ տարւում է և Պապի մայր Փառանձեմը<sup>1</sup>, իսկ վէպում դուստրն են ուզում տանել:

Արաբացոց արշաւանքներին, որ սկսւում է 640 թուականին<sup>2</sup>, ըստ Սերէոսի աչքի են ընկնում Թէոդորոս Ռըշտունին և իւր փեսայ Համազասպ Մամիկոնեանը: Արաբները Հայաստան են մտնում հարաւից Ասորեստանի կողմից Չորոյ ճանապարհով՝ առնում են Տարօնոյ աշխարհը, Բղնունիքն ու Աղիովիտը, եւ Բերկրու Չորից ճանապարհ բռնելով Որդապու և Կոգովիտ անցնելով թափուեցան Այրարատ:» Գուինն առնուեցաւ<sup>3</sup>, 35000 զերի տարուեցան Ասորեստան (Ասորիք). Թէոդորոս Ռշտունին Կոգովտում դարանակալ եղաւ, բայց յաղթուեցաւ<sup>4</sup>: Ինչպէս առհասարակ այնպէս էլ այս դէպքում գերիներէ մէջ կային ի հարկէ «կանայք և մանկտիք»<sup>5</sup>, ժողովրդական վէպում Գուինն մայրաքաղաքի տեղ բռնել է Կապուտկող — Կապոյտ բերդը, որ յետոյ արաբացոց շրջանում, մանաւանդ Սմբատ Ա-ի պաշարմամբ Յուսուֆի ժամանակ յայտնի է և տարուած գերիներով:

Ապա Սերէոսը խօսում է Իսմայէլացոց՝ Արաբացոց և Հայաստանի տէր Յունաց հաշտութեան մասին, որ կնքւում է Դամասկոսում Հայաստանի յունաց Պետկոպ զօրավարի:

1. Փ. Բուզ. Գ, Տե, էջ 174—176:

2. Dr. Mkrtitsch Ghazarian. Armenien unter der Arabischen Herrschaft, էջ 16. Marburg 1903:

3. Ըստ Ղ. Ալիշանի 640 թուի հոկտեմբերի 6-ին (Այրարատ, § 171, էջ 407) ուրիշները 642-ին կամ 647-ին, ա. Մ. Ghazarian էջ 28—29: Սերէոսն ասում է Տրէամսի 20-ին ուրբաթ օր (Գ. 1, էջ 109):

4. Սերէոս Գ, 1, էջ 108—109:

5. Ղևոնդ վ. Պատմ. Գ. էջ 9:—Կարնոյ առումից յետոյ Իսմայէլի զօրքը «Ձամենայն եկեղեցին մերկացոյց: եւ կալաւ պատանդ զգլխաւոր իւխանս աշխարհին և զկանայս և զուսերս և զղստրս բազմաց» ասում է Սերէոսը Գ, 1, էջ 150:

ձեռքով Մաւիասի՝ Մուաւիայի և Կոստանդ Բ. կայսեր ժամանակ<sup>1</sup>։ Այնուհետև նա շեշտում է երկու երեք անգամ, թէ այդ խաղաղութիւնը լուծուեցաւ խաղաղութեան պայմանի երրորդ և Կոստանդի թագաւորութեան տասներկուերորդ տարին<sup>2</sup> այն է 652/3 թուականին։ Արաբացիք արգելում էին Կոստանդի մուտքը Հայաստան ասելով, «Հայաստանը մերն է»։ Այս էլ ահա վէպի խաղաղութեան տասներկու տարին։

Համազասպ Մամիկոնեանը, որ իւր աներ Թէօդորոսին անշուշտ միշտ գործակից էր, ինչպէս այդ երևում է և երկուսի Ազթամար կղզում դարանակալ լինելու անցքից և հաւանօրէն Թ. Ռշտունու հիւանդութեան ժամանակ<sup>3</sup> գլխաւոր ղեկավար, վերջինիս մահից 654/5 թուականից յետոյ դառնում է Հայաստանի իշխան։ Համազասպն իրօք 660 ական թուականի վերջերին ապստամբում է Արաբացիներից, երբ սոքա ունենալով իրենց մօտ Դամասկոսում 1777 գերի նշանաւոր նախարարական տոհմերից, մանաւանդ Մամիկոնեաններից, «Պահանջում էին այլևս ուրիշ իշխաններ իրենց կանանցով Ասորիք։ Այս պատճառաւ մահը կեանքից լաւ համարելով հեռացան նոցա հպատակութիւնից»<sup>4</sup>։ Ճիշտ այսպիսի մի պատճառով Մհէրը՝ մօրը Մսրը չուղարկելու համար կռիւ է մղում։ Առաջին կռուին Մհէրն սպանում է Մարամելիքի զօրավարին, իսկ երկրորդին՝ Մսրայ Մելիքին և հասնում Մըսր։ Այս էլ անդրադարձումն է այն պատմական իրողութեան, որ շեշտում է Սեբէոսը, և նորանից յետոյ ուրիշները, թէ երբ որ Իսմայէլի որդիք՝ արաբները արևելք արշաւեցին և համարեա բովանդակ առաջաւոր Ասիային մինչև Հնդկաստան տիրեցին «Ոչ ել ընդ նոսա և թագաւորն նոցա Ամո»<sup>5</sup>։

1. Սեբէոս Գ, 14, էջ 118:

2. Սեբէոս Գ. 16, էջ 137, 139, 143 (յամին մետասաներորդի):

3. Սեբէոս Գ, 12, էջ 146:

4. Սեբէոս Գ, 12, էջ 152:

5. Սեբէոս Գ, 1, էջ 109:

այն է Օմարը—Վէպի երկու կռիւը արդեօք Արծափի<sup>1</sup> և Մարգոցէսի<sup>2</sup> փառաւոր յաղթութիւններն են, որտեղ թ. Ռշտունին այնպէս փայլեց և սարսափ տարածելով արաբացոց վրայ յունաց չար նախարձը ևս գրգռեց. թէ գուցէ և արաբացոց արշաւանքների երկու գլխաւոր շրջանն է, երբ սոքա վերջում մինչև իսկ Կարին հասան. Անշուշտ, ինչպէս վերեւում մասամբ ցոյց տուինք, Համազասպ Մամիկոնեանը միշտ գործակից է եղել իւր աներոջ յաղթանակներին, իսկ սորա հիւանդութեան ժամանակ, մանաւանդ մահուանից յետոյ գլխաւոր և միակ ղեկավարը Հայաստանի Հասկանալի պիտի լինի ուրեմն, թէ ինչու ժողովրդական վէպը բոլորը միայն իւր դիւցազնին է վերագրում:

Վիպական են բացի քառասուն թուից հազարը, ինը, երեքը, բայց մանաւանդ եօթը<sup>3</sup>. սակայն Մհերի դէպքում Համազասպի պատմական անցքերում երևում են և այս վիպական թուերը. Վէպի տասներկու տարուան խաղաղութեան խզումը, ինչպէս ասացինք, ակնարկ է 652/3 թուականին կատարուած պատմական իրողութեան. «Այս տարին հայերն ապստամբեցին, հեռացան յունաց թագաւորութիւնից և հնազանդեցին Իսմայէլի արքային՝ ծառայելու... դաշինք կռեցին թ. Ռշտունեաց տէրը Հայոց բոլոր իշխաններով... Իսմայէլի իշխանը խօսում էր նոցա հետ և ասում. «Այս թող լինի իմ հաշտութեան ուխտը իմ և ձեր հետ քանի տարի որ դուք կամենաք, և ձեզնից եօթը տարի հարկ

1. Սեբէոս Գ, լբ, լգ, էջ 116—118: Ղևոնդ վ. Պատմ. Գ, էջ 11: Արծափի ճակատամարտը տեղի է ունեցել 643-ին. Այրարատ թթ, էջ 509: Dulaurier, Recherches chr. էջ 231—232: Ըստ Գիւլտրիէի օգոստոսի 10-ին, իսկ ըստ Ալիշանի 11-ին:

2. Ղևոնդ Պատմ. Բ, էջ 7: Սեբէոս Գ, լե, էջ 138:

3. Շատ ազգերի մէջ, հմմ. Die Sieben und Neunzahl im Kultus und Mythos der Griechen. von W. H. Bocher. XXIV Band der Abhandl. philol.—histor. Klasse der Königl. Sächs. Gesell. der Wissensch.<sup>1</sup>

չեմ առնել»<sup>1</sup>։ Այս է վէպի ակնարկից Մհէրի թագաւորութեան կօթն աթ տարիները, որ իրօք պատմական է 652/3—659/60, և 659/60 թ. Համազասպի մահուան տարին է։ Այնուհետև Մհէրը ազգատանալով իւր զաւակներին Մարամելիքին պահ է տալիս։— Սերէոսի պատմութեամբ Համազասպի երեք որդիքն են պատանդ Դամասկոսում, իսկ Մուշեղ Մամիկոնեանի շորսը<sup>2</sup>, ըստ ազգային ժողովրդական վէպի Մհէրի երեք<sup>3</sup> որդոց պահելու համար Մարամելիքն ուղում է ճապաղջուրն ու Քօղէն։ Այսպիսով ուրեմն ըստ պատմութեան կօթը նշանաւոր Մամիկոնեան կայ պատանդ. ըստ վէպի<sup>4</sup> Մհէրն ունի կօթը թոռ, որոնցից առաջին շորսը ծնուել են Բաղբատում և վերջին երեքը Սասունում։ Վկայական պէտք է համարել և Դամասկոսի հայ պատանդների թիւը, որ տալիս է մեզ Սերէոսը Ռ. Չ. Հ. Ե. որ մենք ուղղում ենք Ռ. Չ. Հ. Ե. = 1777<sup>5</sup>։

Վէպի Մհէրի և պատմագրութեան Համազասպ Մամիկոնեանի այսքան նմանութիւնները մեզ տեղիք տուաւ լրացնել պատմագրութեան մի պակաս տեղեկութիւն Համազասպի մասին։ Ըստ վէպի Մհէրը գնում է Մորը՝ այսինքն Եգիպտոս. բայց ոչ ժամանակակից Սերէոսի և ոչ էլ նորանից օգտուող պատմագիրների Յովհաննէս պատ-

1. Սերէոս Ք. լե, էջ 138. Ս. Պետերբուրգ 1879: Այս հրատարակութեան «զերբեամ միւն իրիսեցինք եօրն ամ, որ ունեցել է 4. Պօլսի հրատարակութիւնը, տես Մ. Ghazarian, Armenien ևն էջ 30, ծանօթութիւն 4:

2. Սերէոս Ք. լը, էջ 152:

3. № 3, ԳՍ. Ս.բ.բ.

4. № 13, ԼԱՀ. ՆԲ.Ը:

5. Սերէոսը, սորանից առնելով և Յովհաննէս կաթուղիկոս պատմաբանը (Մտկոռայի հրատ. էջ 51. Երեսուղէմինը ժԹ, էջ 113), գնում են Ռ. Չ. Հ. Ե: Ի նկատի առնելով սոյնանման թուերի ընդհանրապէս կըսը՝ վիպական գործածութիւնը և մանաւանդ հագար և իրար հետևող երկու եօր թուերը, ուղղեցինք Ռ. Չ. Հ. Ե. մանաւանդ որ ձեռագրերում շատ յաճախ Ե և Ե շփոթում են: Եւ յերաւի Ասողիկն, ինչպէս որ մենք ուղղագրեցինք, ունի Ռ. Չ. Հ. Ե. (Բ, ք, էջ 99. Ս. Պետերբ. 1885):

մաքանի և Ասողիկի մէջ ոչինչ չդտանք Համազասպի Դամասկոս գնալու մասին: Վէպի աւանդածը կարելի էր բացատրել այնու, որ Համազասպի եղբայր Գրիգոր Մամիկոնեանն է գնացել Եգիպտոս-Մսրո, սակայն նա էլ պատանդ էր, ինչպէս ասում է Սեբէոսը, կարելի էր հաստատուն կերպով պնդել այդ բանի վրայ, ի նկատի առնելով որ Աղուանից Զուանչիրն աւելի հեռաւոր ճանապարհ կտրելով Հայաստանով Դամասկոս անցաւ: Սակայն մենք ունինք և հետեւեալ անհերքելի ապացոյցը:

«Դաւիթ թարգման Տարսնացի զճառս զայս յետոյ դարցոյց ի յունէն ի հա բարբառ ի Դամասկացոց քաղաքին, հրամանաւ Համազասպա Կորապաղատի Մամիկոննից տն: Եւ եղիցի արհնութիւն տն ի վերա նոցին»<sup>2</sup>:

Ըստ վէպի փոփոխակների մեծ մասի Մհէրը գնում է Մըսր և իւր որդոց տանում, երբ այնտեղ Մելիքին յաջորդել էր Մսրամելիքը, ըստ մի քանիսի նախորդին սպանելով: Մհէրը Մսրամելիքին յանձնում է իւր որդոց խնամատարութիւնը: — Ահա թէ ինչ է ասում պատմութիւնը: Ասուած խոփութիւն քցեց Իսմայէլի որդոց Հնդկաստանի, Ասորեստանի, Եգիպտոսի և Տաճկաստանի չորս բանակների մէջ: Արդ Եգիպտոսինը և Տաճկաստանինը [=Արաբիա] միաբանելով սպանեցին իրենց թագաւորին [=Օսման] և ուրիշ թագաւոր [=Ալի] դրին: Իսկ Ասորեստանի իշխան Մաւրասը, որ իրենց թագաւորի երկրորդն էր, սպանեց և այս Եգիպտացոց թագաւորին և ջարդելով Տաճկաստանի բանակը՝ դարձաւ Ասորեստան [=Ասորիք]: Մաւրասը զօրացաւ, յաղթեց բոլորին ծովում և ցամաքում և թագաւորեց Իսմայէլի որդոց կալուածքների վրայ<sup>3</sup>:

1. Մ. Կաղանկայտ. Բ. Էէ. էջ 313—319. Փարիզ 1860:

2. Գարեգին վ. «Դաւիթ Փիլիսոփայ». Արարատ 1906. թ. 1, էջ 91. § Ե: Գար. Զարբ. Հին դպրութիւն, Դաւիթ Բագրևանդացի, էջ 455. Վենետիկ 1897 և Հայկ. թարգ. էջ 329, Վենետ. 1889: Գարեգին վ. հանել է Ս. Էջմիածնի մատենադարանի № 917 (=Կարին. ց. 903) ձեռագրի 156ա էջից:

3. Սեբէոս Գ, ԼԸ, էջ 152—153:

Օսմանի և Ալու կռիւները և Մուաւիայի յաղթանակը 656—661 թուականներին Հայաստանն իրօք Արաբացոյ իշխանութեան տակն էր: Համազասպն<sup>1</sup> այդ միջոցին պէտք է Գամասկոտում՝ եղած լինի և նորա հրամանով Գաւիթ թարգման Տարօնացին ճառ է թարգմանում: Համազասպի երեք որդին և եղբայրը Գրիգոր պատասնդ էին, որ եղբօր մահուանից յետոյ ամիրապետից Հայաստանի կառավարիչ նշանակուեցաւ:

Ըստ վէպի փոփոխակների մեծ մասի Մհէրը բնակա- նաբար Սասունի թագաւոր է, ըստ միքանիսի Մհէրը Մսրայ թագաւոր է, իսկ համարեա ըստ մեծ մասի Մսրայմելիք- Շուն—Մելիքը Մհէրի անհարազատ զաւակն է, իւր՝ Մհէրի մի երկրորդ կամ նախորդ Մսրամելիքի և կամ մի այլ անհաւատ կնոջից և նորա յաջորդն է Մսրում: Մի փոփո- խակում միայն Առիւծաձև Մհէրի հօր՝ Սանասարի եղբայր, ուրեմն Մհէրի հօրեղբայր, Ասլիմելիքն է Մսրայ թագաւոր, որին սակայն դարձեալ Մհէրի խորթ որդին սպանում է և յաջորդում: Արդ այս հանգամանքներից միայն այն է Համազասպին համապատասխանում, որ նա Սասունի տէրը կամ թագաւորն է: Դժուար թէ Համազասպի Գամասկոտ գնալը միայն առիթ տար այսպիսի զրոյցի, էլ չեմ խօսում Մուաւիայի մասին, որի հայ կամ հայ ծագումն ունենալու մասին ծիծաղելի կը լինէր մտածելն անգամ: Դարերի ըն-

1. Համարեա թէ սոյնպիսի պարագաներում Քաջ-Վարդանի հայր և Ս. Սահակի փետոյ Համազասպ Մամիկոնեանը Տիգրան է գնում (Խոր. Գ, ծա, էջ 244): Բացի այս հեռաւոր նմանութիւ- նից ուրիշ ոչ մի գիծ առ այժմ չենք գտել վէպում: Անտարա- կոյս Մեծ-Մհէրը նախ այս Համազասպն է, սակայն դժբախտաբար պատմութիւնը, մանաւանդ Բուղանդը և Փարպեցին ու Եղիշէն Խորենացուց էլ աւելի սակաւ բան են հաղորդում իրենց Համա- զասպների և Համազասպեանների մասին: Մինչդեռ Համազասպ Վահանեան և սորա եղբորորդի Համազասպ Գագիկեան իրօք ազդել են և հետքեր թողել ընդհանրապէս վէպի և Մեծ-Մհէրի վրայ (Հմմ. № 13, 1ԱՀ, էջ 5[39] և Ղևոնդ պատմադրի 1, էջ 130—131. 1բ, էջ 133—135 և Հմմ. 1գ, էջ 135—137. և իս, էջ 164—165 ևն):

Թացքում՝ Բաբելոն—Բաղդատ, Նինուէ—Մուսուլ, Դամասկոս, Սամաուա և այլ մայրաքաղաքներ տարագրուած պատանդ և դերի հայ իշխանների կեանքի հանգամանքները կարող էին ի հարկէ այս տեսակ զրոյցների տեղիք տալ, ինչպէս քիչ վերև Շամիրամի և Արայի օրինակով շեշտեցինք։ Սակայն մինչև ցարդ մենք տեսանք, որ ժողովրդական վէպի նման հանգամանքները արդիւնք են ոչ թէ երևակայութեան, այլ անդրադարձումն պատմական խոշոր մանաւանդ այնպիսի իրողութեանց, որ անունների կամ անցքերի նմանութիւն կայ, վէպի համար փոյթ չէ, թէ այդ անձերն ու անցքերը իրարից դարերով հեռու են։

Մենք արդէն տեսել ենք, որ Դարեհ Վշտասպեանի ժամանակ կային նշանաւոր հայ զօրավարներ Դադարսէսը և Անդիտի որդի Արախը, որ Բաբելոնում իրեն հրատարակեց Նաբունետի որդի Նաբուգոդոնոսոր և Բաբելոնի Թագաւոր՝ Դարեհի ընթացքում վէպը շերտաւորուել է և նման պարագաներով հիւսել է և ստեղծագործել միապաղաղ մի ամբողջութիւն։ Այստեղ ազդել են Արաքացոց և Համազասպ Մամիկոնեանից դարեր յետոյ տեղի ունեցած պատմական հետեւեալ անցքերը։ Մելիք—չահի թուրք ստրուկ հաջիբ՝ սենեկապետ Ակսունկարը, որ Տուտուշի փոխարքան էր Հալէպում (1085—1094), ապստամբեց սորա դէմ և սպանուեցաւ։ Սորա որդին աթաբէգ Իմադ—ադ—դին Ջանգին 1127 թուականին նշանակուեցաւ Իրաքի և Բաղդատի փոխարքայ և նոյն տարին տիրեց Մուսուլին, Սինջարին, Ջեզիրային և Խառանին, իսկ յաջորդ տարին Հալէպին և Ասորիքի այլ քաղաքներին։ Նա յատկապէս փայլեց իբրև պաշտպան մահմէդականների խաչակիրների դէմ։ Սորա մահից յետոյ իւր երկիրները բաժանեցին երկու որդիքը․ Նուրադ դին Մահմուդը, խաչակիրների միւս նշանաւոր հակառակօրդը, որ տիրեց Ասորիքին, իսկ Սէյֆ—ադ—դին Ղազին իշխում էր Մուսուլում և տիրում Միջագետքին<sup>2</sup>։

1. Արարատ 1906, Յունիս—Յուլիս, էջ 604։

2. Սաէնլի Լէն—Պուլ Мусульманскія Династія, § 62, էջ 136—138։

Արդ Սէյֆ-ադ-դինը մեր վէպի Սիւդին է՝ Իսկ Նուրէդ-դինի մօտ գնաց Ռուբինեանց Մլինը հայրենի երկրից մերժուելով, նոցանից ստացաւ Կուրիս գաւառի իշխանութիւնը և ոմանց ասելով մահմէդականութիւնն ընդունեց, Նուրէդ-դինի հետ, ինչպէս ասում են, եղբայրացել է և երկուսը միասին դրամ են կտրել իրենց անունով<sup>2</sup>։ Մլինն իրօք եղել է հալածեալ և հալածիչ։ Մլինի կեանքի գլխաւոր գծերն ու հանգամանքներն երևում են աւելի Պատիկ Մհերի վրայ (հայրական ժառանգութիւնից զրկուելը, Հալէպ գնալը և այլն), ինչպէս յետոյ կը տեսնենք։ Մլին և Մհեր<sup>3</sup> անուան նմանութիւնը, միևնոյն երկրում կատարուած քաղաքական անցքերինը՝ հայոց և մահմէդականների մէջ Համազասպի և Մլինի ժամանակ անշուշտ և Մլինի ու Նուրէդ-դինի կեանքի առանձին հանգամանքները կարող էին վէպին առիթ տալ Մեծ-Մհերին Մսրայ թագաւոր ևս դարձնելու։

Սակայն տակաւին անբացատրելի են մնում Մհերի խորթ որդու Մելիքի կամ Մսրամելիքի և կամ Շուն Մելիքի և Մհերի հօրեղբոր Ասլիմելիքի Մսրում թագաւորելու հանգամանքները։ Դարձեալ դիմենք պատմութեան։ Մահմէդականութեան տիրապետութեան շրջանում եղել են հաւատուրաց հայ իշխաններ, որոնք, ինչպէս յատուկ է այս նորագարձներին, պատուհաս են դարձել իրենց ազգի գլխին, ինչպէս Փիլարտոսը<sup>4</sup>, որ թոռնիկ Մամիկոնեանին

1. № 4. ԳՍ. Մկր. Գ՝ Դաւիթ, էջ 99—100: Տես Արարատ 1906, Ապրիլ, էջ 337-ի ծանօթութիւն, մեր յօդուածը:

2. Ալիշան. Սիսուան, էջ 56—57. Վենետիկ 1885:

3. Այս օրինակ փոփոխութիւններ յատուկ են ոչ միայն հատարակ ժողովրդին, այլ և տեսնուում է պատմագրերի մէջ. Մ. Աւահայեցի Մարաշ-ը կոչում է Մշար (20): Տարօրինակ կրճատում ունի Ղևոնդ պատմագիրը, «Շամ, որ է Հեշմ» (Ժէ, էջ 100), այն է Հիշամ: Անշուշտ պատմագիրներն էլ այս ձևերն առնում են ժողովրդից:

4. Մատթէոս Աւահայեցի էջ 206—210. Վաղարշապատ 1898:

սպանել տուաւ. Կութլուղ Սասունցի հայ ստրուկը, որ 1198-ին Խլաթում եօթն օր շահի-արմէն դարձաւ<sup>1</sup>: Սակայն սոցանից ոչ մէկը և ոչ միւսը Մուսուլի կամ Մարի թագաւոր չեն եղել, այնտեղ չեն իշխել, որքան էլ որ կարող էին առիթ դառնալ վէպի այդ զրոյցին: Այդ մասի հէնքը կամ հիմքը հետեւեալ պատմական իրողութիւնն է:

Արաբացոց խալիֆայութեան տիրած բոլոր երկրները, մահմէդական աշխարհը, յետոյ շատ պետութեանց և հարստութեանց բաժանուեցաւ: Ժ-ԺԱ դարում երկու գլխաւոր խմբի բաժանուեցան: Ասիոյ մահմէդական պետութիւնները, սիւննիներ, հնազանդւում էին Բաղդատի խալիֆաներին իբրև կրօնապետի. իսկ Աֆրիկայի տէրութիւնները հպատակւում էին Եգիպտոսի [=Մըսր] շիա Փատիմեանց, որոնց հնազանդւում էին Արաբիոյ և Ասորիքի մի քանի բանդագուշ ցեղեր: Ազիզի ժամանակ (957 - 996) նուաճեցին Հալէպը, Դամասկոսը և Մուսուլը: Սորա յաջորդ Հարէմը, հուժկու խալիֆաներից վերջինը, սպանուեցաւ քրոջ ձեռքով և տեղն անցաւ Դահեր կամ Զախիրը (1021 — 1036): Սորա յաջորդ Մուստանսիրի ժամանակ (1036 — 1094), ինչպէս և յետոյ, խալիֆաներն անուանական էին և լոկ կրօնապետներ, իսկ աշխարհիկ իշխանութիւնը, ինչպէս և Բաղդատում, ա՛յցաւ թուրք թիկնապահ գնդի զօրավարներին, որոնք սկզբում վեզիր յետոյ թագաւոր կամ սուլթան անուանուեցան: Այս վեզիր թագաւորներից առաջինն եղաւ Աբու Մոհամմէդ Հասան մականունեալ Յազուրի, մի իմաստուն, հուժկու և խստաբարոյ իշխան, որ ատելով քրիստոնեաներին Ս. Յարութեան տաճարը կողոպտել տուաւ: Սա սպանուեցաւ, իսկ թիկնապահ գնդի մէջ ծագած խռովութեանց վերջ տուաւ վայրագ վեզիր-թագաւոր Նասր-էդ-Գաուլան: Եգիպտոսի ամբողջ կուլտուրան իսպառ սպուռ ջնջեց, ծագած ներքին խռովութեանց յաջորդեց սով և ժանտախտ: Սովի, սրածութեան և այս սարսափների ժամանակ խալիֆան դիմեց վեզիր թագա-

1. St. Martin, Mémoires I, էջ 432.

ւոր Բէդր-ալ-Ջեմալին <sup>1</sup> որ հայ էր:

«Այս սղբալի դրութիւնից, ասում է Գէորգ Վերէրը <sup>2</sup>, Եզիպտոսը [—Մսրբ] ազատուեցաւ միայն այն ժամանակ, երբ Նասր-էդ-Գաւայի սպանումից յետոյ խալիֆան իսլամ դարձած հայ Բէդր-ալ-Ջեմալին իւր վարձկան գնդերով Ասորիքից կանչեց: Սա իմաստուն կառավարութեամբ վերականգնեց կարգը և առաջուան բարեկեցութիւնը, բայց Ասորիքն ու Պաղեստինը ստիպուած էր թողնել մի վայրենի և աւազակաբարոյ թուրք գնդի, որ իւր քրիստոնեաների դէմ յարուցած հալածանքներով խաչակիր արշաւանքների գլխաւոր առիթը տուաւ: Շուտով այս թուրք հորդաներն ընկճուեցան մի սելջուկեան ցեղապետի գերազանց ուժով, որ այժմ Դամասկոսում հաստատուեցաւ և իւր տէրութիւնը . . . տարածեց մինչև Մուսուլ և Հալէպ: Բայց թէ բնիկ և թէ ուխտաւոր քրիստոնեաների վիճակն այս փոփոխմամբ չբարւոքուեցաւ: Առաջին խաչակրութեան

1. Բէդր-ալ-Ջեմալին մասին տես և Gustav Weil, Geschichte der Chalifen III, Վեդիբ Ֆատիմեանց էջ 110, Կուիւ Անսիզի դէմ էջ 125. Դամասկոսի պաշարումը, էջ 128. Mannheim, 1851: Բեդր անունը, որ նոյն է թուրքական Բադր կամ Բէդր անունան հետ (Սաէնլի Լէն-Պուլի ցանկը) կարող է հայոց Պեսրոս անունը լինել: Այս անունն Քրանսերէն ձեւը Պիէր կարող էր խաչակրութեան ժամանակ իբրև մօտ թուրքական Պիւ անուն (Սաէնլի Լէն-Պուլի ցանկը) ծանօթ լինել մահմէդականներին: Ուստի կարծում ենք, թէ մեր ազգային ժողովրդական վէպի Պիւբապիւր կամ Պիւհաջը (№ 3. ԳՍ. Աբբ. Գ՝ Դաւիթ, էջ 33—35), եթէ ոչ Բէդրը գէթ մի ուրիշ հաւատուրաց լինի: Խլաթայ շահարմէններից մինը Ակ-Սունկար (Ստ. Լէն-Պուլ § 65, էջ 143) կամ Ակ-Սանկոր Հազարդինարին հոչւում է Բէդր-էդ-դին Խաշաշ (Խաշաշ = խաչար) (St. Martin, Mémoires, I, էջ 432) պէտք է հայ լինի, որ սա Սոկմանի սրուկն էր, աւելի հաւանական է դարձնում մեր ենթադրութիւնը: Յամենայն դէպս իրողութիւն է, որ սորա անմիջական եօթն օրեայ յաջորդը 1198 թուականին Կուստուղը նոյնպէս ստրուկ և Սասունցի հայ էր:

2. Lehrbuch der Weltgeschichte I, § 372. էջ 684—685. Leipzig 1888:

Ժամանակ Մալէք-Շահի որդի Բարքիարովը իւր իշխանութեան տակ ձգեց ամբողջ Ասորիքն ու Միջագետքը և Երուսաղէմում, Անտիոքում և Մուսուլում և այլ տեղերում կարգեց հարկատու իշխաններ: Սակայն առաջին խաչակիրների երևալուց սակաւ ինչ առաջ Երուսաղէմը ընկել էր Եզիպտոսի վեզիր Ահմէդ Աֆղալի ձեռքը, որ Բեղրալ-Ջեմալի որդին էր»:

Ի նկատի առնելով պարագաները, Արաբական իշխանութիւն, Եզիպտոս-Մարը, Միջագետք-Մուսուլ, Գահի և վեզիրութեան կրկնակի փոփոխումը ստանութեամբ և այն, որ Մհէր-Մլեհի հօրեղբայր Ասլիմելիքը [=խսկական, արժանաւոր, ցեղով մելիք] համարուել է Բէդր-ալ-Ջամալին իբրև Մհէր-Մլեհից ժամանակով առաջ ապրած, մինչդեռ Ահմէդ-Աւդալը անհաւատ կնոջից Մարամելիք կամ Շուն-Մելիքն է, որի միայն հայրն է հայ: Այս երկուսն էլ հայր և որդի իբրև վեզիր-սուլթաններ Եզիպտոս-Մարի թագաւորն են, ինչպէս Մհէրը կամ Ասլիմելիքն ու Մարամելիքը: Հայ ժողովրդի՝ համարեա ամենուրեք, դարերի մանաւանդ մահմէդականութեան շրջանի դառն փորձառութիւնից ծագած համոզմունքն է, թէ հայութեան հալածիչները հաւատուրաց, ծագմամբ հայ մարդիկ են: Այսօր նոյնը շշուկով խօսում է և արիւննուշտ սուլթան Համիդ Բ. մասին: Արդեօք Բէդր-ալ-Ջամալին և իւր որդի Մահմէդ Աւդալը այս տիպերից են, առայժմ՝ չենք կարող պատմութեամբ հաւաստել: Վէպին նայելով Բէդրն իբրև Ասլիմելիք կամ Մհէր զերծ պիտի լինի այդ առաքինութիւնից, բայց ոչ որդին, որ բռնում է վէպի Շուն-Մելիքի տեղը: Սակայն մի բան էլ ասենք, ինչպէս առհասարակ Բիւզանդիոյ հայ՝ մանաւանդ մակեդոնական կոչուած հայ հարստութեան կայսրները և մեր օրերում օտարներին ծառայող նշանաւոր հայերը, ևս առաւել Եզիպտոս-Մարի այդ երկու վեզիր-թագաւորները իրօք կարող են «օտարի ճրագ» համարուել: Այսպէս է ասում հայ ժողովուրդը այսօր էլ և նոցա այս աշխարհայեացքը կրկնում է իւր դիւցազն Մհէրի բերանով մեր ազգային ժողովրդական վէպը:

Մի քանի խօսք ևս Մհերի ծագման և մակդրի մասին:— Սասմայ ծուերի մէջ Դիւցազնական տարրը երևում է Մհերների վրայ: Մհեր՝ Մհերիկի վախճանը և Մհեր՝ Մեծ Մհերի ծագումն այդ են ցոյց տալիս: Մհերը Միհրարեգակն է: Մեծ Մհերը ծնւում է ջրից, ծովից, որ հետեանք է այն գաղափարի, թէ ծովը Միհրարեգակի մայրն է: Մենք ասում ենք «արևը մայր մտաւ» և հասկանում երկիրը, բայց շատ տեղ էլ ծովը, մի գաղափար որ հեթանոս հայերն էլ ունէին արեգնաչեայ Վահագնի մասին. ոչ ապաքէն երգում էին, թէ նորան «երկնէր և ծիրանի ծով»: Մեծ-Մհերի ձին ևս Գուռկէ-Չալաթը հրեղէն է, բայց կոչւում է և ջրեղէն և քամեղէն<sup>1</sup>: Հերոդոտի պատմութեամբը՝—

1. Դիւցազնական տարրն արտայայտւում է բնութեան և իւր երևոյթների անձնաւորութեամբ և աստուածացումով: Ջրի պաշտամունքի հետքերն արտայայտւում են մեղնում, լուսաղբիւրներ, կաթնաղբիւրներ ևն: Վարդապետի ու Համբարձման տօները, որ և ծագկն տօն է. որոշ ծագկններ նուիրական էին Միհրին, ինչպէս և օրեր (Iran. Philol. II, էջ 642): Մեղնում ինչպէս վէպից և Խորենացուց երևում է ուրբաք օրը: Աղբիւր եղբոր պաշտամունքին վառում էին «կրակ-քոյրը» (Խոր. էջ 301), որ ցարդ կատարում ենք Տրընդէզին՝ Տեառնըդառաջին: Իսկ քամին Ն. Նախիջևանի Ժողովուրդը համարում է մի մարդ, որ սարի վրայ նստած փչում է. «Զի էլ կշտանայ փչելուց» ասում են և անիծում. «Մակդ բունուկ» = բերանդ փակուի: Ա. ծռերում ևս գործում են քամիները. ձարպախար (№ 4 ԳՍ. Մկր. Գ՝ էջ 100: № 11, Ա., Մկր, էջ 5) կամ Չարբախայ (№ 8, ՀԵԲ, Մկճ, էջ 20, 23), Յարատայ (№ 7, ԲԽ, մկր, էջ 18) և Բաթմանայ Բիւղէն միշտ նոցանից անբաժան: ձարպախար = չորս ջուր, դեա, ծով. կայ մի կիրճ: կապան Սասունից վերև՝ հիւսիս այդ անունով (Վէրբ Տարօնոյ, էջ 10—11: Միրախորեան 4. Ա. մասն Թ, էջ 30—31 և Խարխիս օրաթերթ, № 35), որ ցրտաշունչ հողմ և բուք ու բորան է փչում: Յարատայ քամին հաւանօրէն Լիբիական անապատից, Եգիպտոսից և Արաբիայից փչող կիզէ Հարմադանն է, որ անցնելով Միջագետք, Պարսկաստան, Միջին Ասիա հասնում է Չինաստան: Իսկ Բաթմանայ Բիւղէն, Բուղայ զօրավարն է: Արպիսի սքանչելի համեմատութիւն և նոյնացում բնութեան այդ ահարկու երևոյթների և տարե-

Գարեհի Վշտասպեանի ձիւ խրխնջոցով ընտրութեան հանգամանքը և հայոց Եփրատին ձիեր նուիրելը — այժմ պէտք է հասկանալի դառնայ: Մհէրի թուր կէծակին զրազաշտական ծագումն ունի. այդ կրօնի համար «ամենասուրբն էր ամպերի կրակը — կայծակը»<sup>1</sup>, որ ուրիշ տասնուհինգ զանազան կրակների հետ միացած սպանում է բոլոր դեւերին: Այս բոլորից յետոյ պարզ է, ինչպէս Միհրի պաշտամունքը, այնպէս էլ անունը հայերս ստացել ենք Իրանից: Հաւանօրէն այս հանգամանքին պիտի վերադրել այն երևոյթը, որ Զոջանց Տան հայ ժողովրդական վէպը կարծես թէ այդ զգալով իւր գիւցազներին և յատկապէս Մհէրին կապում է Իրանի գիւցազների հետ ազգակցական կապերով<sup>2</sup>:

Սկզբում վէպը, ինչպէս երեք փոփոխակներից ևս երևում է, ունեցել է միայն մի Մհէր, ինչպէս կայ միայն մի Միհր-արեգակ, բայց յետոյ երկճեղքուել է: «Խազար Մհեր կայ, խազար Գաւիթ կայ. մա վննակ դիւ ես Մհեր»<sup>3</sup> ասում է Օդան-Տոդան թագաւորը: Բայց և այնպէս վէպի փոփոխակների մեծ մասն ունին երկու Մհէր, Մհէր-Մեծ-Ասիւծաձև Մհէր և Մհէր-Մհէրիկ Պատիկ Մհէր, որ է իսկապէս Միհր-արեգակը: Այս երկճեղքումը տեղի է ունեցել, երբ Մամիկոնեանք և Արծրունիք սկսել են Միհր-Մհէր անունը գործածել, երբ դեռ վառ էր մնում նախնիքների յիշատակը և «ըստ յուսոյ» կոչում էին, բայց մանաւանդ երբ մնացել էր դեռ ևս անմոռաց փառաւոր արքայական

բային Բուզանջի, որ Հայաստանը օտակն ու վրայ արաւ: Մի ուրիշ հրեշ ևս կայ մեր վէպում Կասրժ — Կաշմ ոստիկանը. Նա նախաբարներին այրեց 2. Նախիջևանում, այստեղ դարձել է սուրհանդակ՝ Կասրջ Կասոն (№ 4 ԳՍ. մկբ, Գ՝ Գաւիթ, էջ 303):

1. Ратцель Народовѣдѣніе, перев. А. Корючевскаго, էջ 768, С.-П. 1903:

2. Բ. Խալաթեանց. Իրանի շերտները Հայ ժողովրդի Մէջ Պարսի 1901: Հմմ. էմին-Ազդ. ժողովածու, հատոր Ե. Հայ-Գրգահան վէպ: Ս. Հայկունի. Մոսկուա-Վարդաշապատ 1904:

3. № 9, 2ԷԳ, Ծար. էջ 394:

չինական և ասորական ծագումն: Հնագոյն ժամանակներում՝ իշխանները և արքաները զիւցազներ կամ աստուած են համարուել: Կադմոսը Հայկին անուանում է «Մեծ գրիւցազանց», ինչպէս և մեր Տիգրան Մեծը: Իսկ Տրդատ Մեծը իւր նախնիք Պարթևներին «Դիւցախառն» է՝ կոչում: Չինաստանի Բողդիխանը այսօր էլ երկնքի որդի է համարում, իսկ ճարտնացոց Միկադոն աստուած: Ասորեստանն ունէր Բէլ արեգակ աստուածը, բայց ունեցել է և համանուն թագաւոր, որ երկիրն ազատել է Արաբացիներից<sup>2</sup>: Ասորեստանի արքայական կազմն ու շուքը անցաւ Իրան: Պարսից արքայից արքաները սեպագրութեանց մէջ անգամ, մանաւանդ Սասանեանք, իրենց կոչում են աստուած՝ կամ աստուածորդի և բարձակից արեգական<sup>3</sup>: Այդ աստուածը իհարկէ Միհրն էր, Միհր-արեգակը:

Մեր Մամիկոնեանք էլ պարծենում էին իրենց չինական արքայական ծագմամբ, ինչպէս Արծրունիք ասորական արքայական ծագմամբ: Մհերը մեր վէպի մէջ իզուր չէ կոչում «Սասան խոյուց, Սասան տան խոյու դառ»: արծիւր երկնային ծագման նշան է, ինչպէս և խոյր արքայական վեհափառութեան և Verethragna-Վահագնի նշանը<sup>5</sup>, ինչպէս վկայում է Շպիգէլը: Մեր Սասանյ խոյերից մէկն է Առիւծաձեւ Մհերը, որ ձեւում, ճղում է Սասունին սով սպառնացող առիւծը: Պարսից արքաների

1. Ագաթանգ. ժԲ, § 127, էջ 73, տպագ. Ս. Էջմիածնի 1908, Տիիսիս

2. Մ. Աբեղեան Հայ ժողովրդական Առասպելները ե, էջ 257:

3. Fr. Spiegel Eranische Altterthumskunde III, էջ 599—602. Leipzig 1878:

4. Մ. Խորենացի Գ, ծե, էջ 249—250: Գ, ծե, էջ 202:

5. Շատ զիպան է Քաջ Վարդանի սաղաւարաբ խոյազուխ նշանով: Արդեօք այդ որ և է ձեռագրի գրաւոր կամ բանաւոր աւանդութեան վրայ է հիմնուած: Մեր մանկավարժների նեստոր՝ Սեդրաք Մանգիկեանի ասելով՝ Քաջ-Վարդանի պատկերը հանգուցեալ Կ. Եղեանի աւելնի (фантазия) արգասիքն է: Ցանկալի էր այդ մասին աւելի և հանգամանօրէն հարրդել իւրը հասարակութեան և բանասէրներին:

պետական զինանշանը ցայսօր շիրի-խուրշիդ առիւծ-արևն է. մի գաղափար, որ հայ ժողովրդին ևս անձանօթ չէ <sup>1</sup>. Ինչպէս արքայից արքաներն այնպէս էլ մեր Առիւծաձև Մհերը երկնային Միհրի երկրային զուգատիպ ծնւն են, ինչպէս նոքա առիւծներ են որսում, այնպէս էլ մեր Մհերը Բայց Մհերի առիւծ սպանելը արդեօք հեռաւօր յուշիկ չէ և այս պատմական անցքի Մանուէլ Մամիկոնեանը, իսկապէս սորա նիղակակից Բարիկ Սիւնին, սպանեց արևաառիծ Մեհրուժանին, որ այնքան փասեց հայերին և չարչարել տուաւ մանաւանդ Մամիկոնեան տիկիկներ, ինչպէս վկայում է Փ. Բուզանդը <sup>2</sup>, և ոչ թէ Սմբատ Բագրատունին, ինչպէս պատմում է Մ. Խորենացին <sup>3</sup>. Բուզանդի թէ Մամիկոնեանց և թէ Մեհրուժանի գործողութեանց և պատերազմների նկարագիրը համարեա ամբողջապէս պատմական վէպ է: Վէպը կարող էր Բարիկ Սիւնու քաջագործութիւնը վերագրել Բուզանդի Համազասպ, Համազասպէ, Համազասպեան Մամիկոնեան սեպուհին, որ մասնակից էր այդ պատերազմներին, մանաւանդ որ վերև էլ տեսանք մի նմանութիւն Մեծ-Մհերի և Քաջ-Վարդանի հօր Համազասպի գործողութեան: Անտարակոյս Բուզանդի սեպուհ Համազասպը Վարդանի հայրն է. եթէ Մ. Խորենացին նոյն գործը կարող էր ուրիշին վերագրել, ապա պէտք է խոս-

1. Հայ ժողովուրդը տեղ տեղ համարել է արեգակը եղբայր, լուսինը քոյր, իսկ շատ տեղ էլ հակառակը: Արևը վախենում է իբրև անջնկ գիշերները դուրս գալ, ցերեկն էլ ամաչում է, ուստի եղբայր լուսինը գիշերն է դուրս գալիս, քոյր արեգակը ցերեկը: Եղբայրը քրոջ տուաւ մի բռն ասեղ որ իրեն նայողներին աչքերը ծակէ: (Աղբիւր. 1887. № 5—6): Այդ ժամանակից արևը մի առիւծ է նստում, որ մի մեծ սուր ձեռքին չար ոգիներից նորան պաշտպանում է (Աղբ. Հանդէս 1. էջ 348. II, էջ 217. M. Abeghian Armenische Volksglaube, էջ 46. Leipzig, 1889):

2. Փ. Բուզ. Ե, խգ, էջ 258—263. Հմժ, Ե, լէ, էջ 249—251:

3. Մ. Խոր. Գ, լէ, էջ 227: Այս վիպական գիծը համեմատելը Յովհ. Մամիկ. Պատմ. Տարօնոյ Գ, էջ 47. և Թ. Արժր. Ա, ժա, էջ 67, 69:

տովանել, որ վէպն աւելի հիմք ունէր»

Մհէրը մեռնում է երգմնազանցութեան պատճառով: Այս գիծն ընդհանուր է թէ սեմական և թէ հնդկագերմանական ցեղերին: Երբայեցոց Սամփոսնն էլ առիւծ է սպանում, ինչպէս և հելլէնների Հերակլէսը: Մեր Մհէրը քառասուն անձին մատաղ արած երնջի արիւննով երեսը լուանում է: Այս քրիստոնէացած ձևն է դիւցազնականի, որով լողանում է գերմանացի Զիգֆրիդը իւր սպանած վիշապի արեան մէջ և անխոցելի դառնում, ինչպէս և Աքիլէսը Սաիքսի ջրերում: Եւ յիշուի մեր միւս դիւցազն Դաւիթը ճիշտ միևնոյն հանգամանքում՝ «մտրթում է երինջները և լողանում արեան մէջ»<sup>1</sup>: Եւ եթէ ոչ Մհէրը, բայց Դաւիթն ունի մտէ խաչ<sup>2</sup>, այդ նոյն է, ինչ որ Աքիլէսի գարշապարի և Զիգֆրիդի թիկունքի խոցելի մնացած մասերը:

Մեր Մեծ-Առիւծաձև Մհէրն էլ ծնւում է հողեղէնից, բայց անսերմ յղութեամբ, ջրից՝ ծովից, կէս հրեղէն, կէս հողեղէն, մի աստուածամարդ. ուտի նա անմահ անմեռ չէ, այլ մեռնում է իբրև երդմնազանց, ինչպէս և Սամփոսնը և յետոյ մեր Դաւիթը: Սակայն ինչպէս որ կայ դիւցազն Վահագն վիշապաքաղ հեթանոս Հայոց քաջութեան անմահ աստուած արեգաչեայ Վահագնը, այսպէս էլ կայ մահկա-

1. № 1, ՍՊ. դ, էջ 13:

2. Պարսկաստանի առասպելական Կայանեանք սկսեալ Կայիօբադից ունին մի խալ իբրև նշան (Spiegel Franische Altertumskunde I, էջ 616), Սելեկեանք լուր էին տարածում, թէ իրենց ազգբնների վրայ ունին խարսխի նշան (Spiegel. III, 599): Այս ուրեմն մի արքայական ծագման նշան է. մեր վէպում սակայն քրիստոնէական ձև է ստացել: Սաչի գերութիւնից և ազատու մից յետոյ խաչի պաշտամունքը զօրացաւ մեզնում ևս. Սահակ Չորափորեցին երգում է իւր խաչի շարականները, յօրինելում են բազմաթիւ խաչերի պատմութիւններ, երևան են դալիս «Ս. նշաններ», որ կրում է Դաւիթը. Հոռամոց կոյսը և կամ մեր Սմբատ Բաղմայազթի թոռ Սմբատը ծոցում խաչ է կրում (Սերէստ, Գ. 14, էջ 136): Մհէրը կրում է հմայիւ, այս արդէն հեթանոսական է, թերևս քրիստոնէականի խառնուրդով:

նայու դիւցազն Առիժաճեւ Մհէր և անմահ, անմեռ Մհէր, Մհէրիկ, Պատիկ—Մհէր<sup>1</sup>։

1. Մհէրի նմանութիւնը Արտաւազդի հետ քանիցս շեշտել ենք, դիտել է և պ. Աբեղեանը, որի ասելով Արտաւազդի նմանութիւնը Ամիրանի հետ, նախ նկատել է Մ. Էմինը (Հայ ժողովրդ. Առասպելներ, Է. էջ 364—365. Վաղարշապատ 1901)։ Սակայն պէտք է դիտենք, որ այդ աւելի արտաքին է։ Ամիրանը մեր Մհէրն է։ Գոնեա Մհէրի բնաւորութեան չար կողմը Սասմայ ծռերի մէջ անցել է դե Արտաւազդի և Ռուբինեան չար Մլեհի գծերից, դէպքերի և անուանց նմանութեամբ։ Թողնելով վրաց Ամիրանի ժողովրդական վէպի, մեր «Բազանց ցան» այտինքն Արեակունեաց վէպի, մանաւանդ թէ Սասմայ ծռերի այլ նմանութիւնները, շեշտենք ամենակատարին։ Ամիրանը չղթայական փակուած է Սակոցնիայում և ասում է, թէ ինքն է «Другъ бѣдныхъ и угнетенныхъ» և այլն (А. С. Хахановъ Ист. Грузин. Словесности I, էջ 40)։ Յիշեցէք հիմա մեր Մհէրին Ագռաւաց քարում, Սակորնիա—ագռաւանոց (սար)։ Յիշեցէք վէպի այդ անունը իւր փոփոխուած անուններով և աղաւաղուած ձևերով Տոսպան բլուր (№ 1, ՍՊ, Թ, էջ 26), Վախ քար (№ 2, ՄԱ, Մհէր, Ղ, էջ 58), Ագռաւու քեար (№ 4, ԳՍ, Ղ՝ Մհէր, էջ 150), Ակոսփու քար (№ 11, ԱԱ. Գաւիթ և Պղտիկ Մհէր, Ե, էջ 45), Ակրփու քեար (№ 9, ՀԵԻ, Գաւիթ և Մհէր, էջ 398), Աղբրփու քեար (№ 8, ՀԵԲ, Գաւիթ և Մհէր, էջ 49) և Կեռպած քար ... Ղաթայ վերև (№ 13, ԼԱՀ, էջ 47 [81]) այլև Մհէրի վախճանը։—Միհրականութիւնը մի ժամանակ մրցում էր քրիստոնէութեան հետ և տարածուել էր ոչ միայն Վրաստանում և Հայաստանում, այլև մինչև Հռոմ (տես Die Mysterien des Mithra, Franz Cumont. գերմ. թարգմ. Georg Gehrich) և մինչև կայսրութեան հիւսիսային և արեւմտեան հեռաւոր ծայրը, Ատլանդեան ովկիանոսը։ Ֆրանսացոց ժողովրդական աւանդութեամբ հարաւային Ֆրանսիայում Substantio ժայռի հետ կապուած է Միհրի աւանդութիւնը (Verhandlungen des II Internationalen Kongresses für Allgem. Religionsgeschichte in Basel, էջ 289—290. 1904. Basel, 1905. A. Westpal-ի յօդուածի ամփոփումը)։ Ժայռերը քարայրներով նուիրական էին Միհրին (Fr. Lübkers Reallex. des klass. Altertams. այլև Albercht Dietrich-ի Eine Mithras liturgie) ինչպէս և որոշ ծաղիկներ ևն։ Միհրը լինելով լուսոյ, ճշմարտութեան և արդարութեան աստուած (Iran. Philol. II, էջ 642) ինչպէս մեր Մհէրը, ծաղիկների և ջրի տօնին Համբարձման և Վարդավառին դուրս է գալիս տարին մի անգամ կամ հինգ նաւակատիբին և ար-

դարութեան արեգակ Գրիստոսի պէս պիտի աշխարհի վերջին, վերջին դատաստանին գայ: Յիշելով այս բոլորը այլև զիտելով մեր և յրաց ժողովրդի արեգակի, լուսնի և այլ աւանդութեանց նուութիւնները, որ գտնուած ենք Խախանովի վերոյիշեալ գրուածքում և M. Abeghian-ի *das Armenische Volksglaube գրքում*, Ագագաբակուն հանդիսում և ուրիշ գրքերում. այլ և աչքի առաջ ունենալով յրաց զիւցազնի՝ Ամիրանի խօսքը, չենք կարող համաձայնել Խախանովին, թէ Ամիրանը՝ Ահրիմանն է (էջ 42):— Ո՛չ Ամիրանն էլ Միհրն է, ինչպէս և Մհէրը, որ մեր լէպը միացրել է Արտաւազի և Մլէհի հետ. և Ամիրան անունը Միհր—ան և ամիրա բառերից է կազմուած, ինչպէս որ ցոյց է ապիւս և «*адмиральство*» բայը (էջ 25): Վասպուրահանը միհրականութեան կենտրոն է երևում: Միայն այստեղ են երևում Միհր—ով բարդուած անուններ՝ Մե[հ]ր—ուժան, Մեհ—են—դակ, Մեհ—առ (տ. Բիւզանդ և Խորենացի): Կանգուար—Ագուաւաբը, Պաղատը, Արամազդայ զիւաց տունը, կրակ քոյրը և ազրիւր եղբայրը Բութ տեղում, որ յիշեցնում է մեզ Բութկայ քաղաղը, երբեմն արշալոյսն աւետող, և Ս. Տիկինը Հոգեաց Տիրամօր վանքը և Դարբնաց քարը (Խորմատենագր. 301, 295) Միհրին նուիրական վայրեր են եղել. իսկ մեր Միհր—Մհէրն այն կողմերն է փակուած. ոմանց ասելով Վանայ միւս անունը Շամիրամակերա—շահ—միհր—կերա (Ստեփան Պալասանեան, Պատմ. Հայոց, 11, էջ 52. Թիֆլիզ 1890):— Իսկ խաւարի և չարութեան ներկայացուցիչները մեր լէպում զանազան դելեր են, Քնիկի, Կազ ևն (= փոշեհան Ս. Կարապետի փոփոխուած անուններով և որ բռնել է ուրեմն Մհէրի տեղը): Ահրիմանի անունը հազիւ հազ լուում է «Հարամի (խարամանի) դև», Խարաման (№ 1, ՍՊ. Գ, էջ 11. Ե, էջ 15), որ եղիշէի «զիւաց Հարամանն» է յիշեցնում (եղիշէ Բ. 33, 35 և 66. Թէոզոսիա 1861) և եղնիկի «Արհմանն չար կարծիցի նոցա, վասն զխարամանի անունն յանձի կրելոյ» (եղնիկ էջ 144 և 235. Վենետիկ. ՌՄՀԵ), այլ և Ահն Անանի—ն, որ «տաւրիի քեաղաքն Զգիւրին» (№ 4, ԳՍ. Գ, Մհեր, էջ 146), որ անտարակոյս Angra Mainyu—ն է. յայանի է և Aka Mainyu անունը, որ Ահրիմանն է համարուում (Iran. Philol. էջ 650):

#### Ստեփան Կանայեանց.

24 յունիսի 1907 աւի.

Վաղարշապատ.

